ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 31» հոկտեմբերի 2018 թ. N 269-Ա

ՎԵՐԳԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 161-րդ, 163-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Պետական պաշտոններ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Վերգինե Ղուկասյանի դիմումը՝՝

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Վերգինե Ղուկասյանին տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը և լրացուցիչ արձակուրդը՝ 2018 թվականի նոյեմբերի 1-ից նոյեմբերի 22-ը ներառյալ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետի պարտականությունները 2018 թվականի նոյեմբերի 1-ից նոյեմբերի 22-ը ներառյալ դնել քարտուղարության վարչատնտեսական բաժնի վարիչ Մկրտիչ Սաֆարյանի վրա:
3. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի նոյեմբերի 23-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ